

## «ՌԻՍԿԻ» ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԲՈՒԺՉՆՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Մելիք-Փաշայան Ա.Է.

Երևանի պետ. բժշկական համալսարանի հոգեբուժության ամբիոն, Երևան Հայաստան

Ինչպես գրականության տվյալները, այնպես էլ մեր հետազոտությունները փաստում են, որ մեծ թվով երիտասարդների մոտ առկա են այնպիսի «ռիսկի» գործոններ, ինչպիսին են՝ պերինատալ շրջանի հիվանդություններն ու անձնային յուրահատկությունները: 147 զինակոչիկի անձի ու բնավորության ուսումնասիրության հետազոտության արդյունքում, նմանատիպ փասակար գործոններ մենք հայտնաբերել ենք 101-ի անամտեզում: Նման անձինք գործնականորեն լինելով առողջ, այնուամենայնիվ, ունենում են զգալի դժվարություններ, եթե ընդգրկվում են ծառայողական բարձր պահանջներ ունեցող ստորաբաժանումներում:

Մարդու թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջությունը առանձնահատուկ վերաբերմունք է դրսևորում էքստրեմալ իրավիճակներում: Նրա գործունեության արդյունավետությունը սերտ կապված է հոգեկանի հոսալիության հետ այնքանով, որքանով անձը ճիշտ գնահատում փոփոխվող պայմանները և արձագանքում դրանց: Հատկապես բարդ իրավիճակներում, միջանձնային հարաբերություններում, անձնային խանգարումները և առանձնահատկությունները պայմանավորվում են վարքային ռեակցիաների բարդությամբ և վարքային դրսևորումների ցածր կանխատեսելիությամբ: Բոլոր հոգեկան խանգարումների կառուցվածքներում անձի ախտաբանությունը գերակշռում է ինչպես զինակոչիկների, այնպես էլ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված զինվորների մոտ: Ելնելով վերը նշվածից, ակնհայտ է համալիր հետազոտման անհրաժեշտություն, անձնային առանձնահատկությունները հայտնաբերող կլինիկական հետազոտում լրացնող այլ մեթոդների կիրառում: Նման մեթոդներից է՝ հոգեբանական թեստավորումը: Մեր կողմից կիրառվել է «Լյուշերի» գունայի թեստը:

Այսպիսով, ընդհանրացնելով զինվորա-բժշկական հանձնաժողովների աշխատանքների փորձը և մեր հետազոտությունների արդյունքները, անհրաժեշտ է ընդգծել, որ «ռիսկի» խմբին պատկանող զինակոչիկները բանակում ունենում են դժվարություններ, եթե ընդգրկվում են ծառայողական բարձր պահանջներ ունեցող ստորաբաժանումների խմբերում: Համալիր հետազոտությունում, մեր կողմից հայտնաբերված ռիսկի գործոնների հայտնաբերումը և նրանց համադրումը կլինիկական ախտորոշման հետ, թույլ տվեց գնահատել այդ գործոնների դերն ու նշանակությունը, դրանց ազդեցության բարձր հավանականությունը՝ ոչ միայն անձի խանգարման զարգացման, այլ նաև հոգեկան հիվանդությունների առաջացման հարցում:

Հետևաբար, «ռիսկի» գործոնների առկայությունը կարող է դիտվել որպես «ռիսկի» խմբի ձևավորման հիմք և հիմնավորել համապատասխան կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտություն՝ զինվորական ծառայության ժամանակ: Դա հնարավորինս կնպաստի «ռիսկի» խմբի զինակոչիկների մոտ նախատեսել և կանխել անսպասելի հիվանդագին ռեակցիաները և վարքը՝ էքստրեմալ իրավիճակներում: